

**Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն
առարկայի օլիմպիադա 2017թ.**

**Մարզային փուլ
8-9 - րդ դասարան**

Տևողությունը՝ 150 րոպե:

Գնահատումը կատարվում է 20 միավորանոց համակարգով:

Առաջադրանքներին տրված ճիշտ պատասխանները գնահատվում են առավելագույնը՝ 1(մեկ) միավոր:

1. Տանկի անձնակազմը սովորաբար բաղկացած է լինում՝

- ա) 5-6 մարդուց բ) 4-5 մարդուց
գ) 3-4 մարդուց դ) 2-3 մարդուց

2.Ի՞նչ պարզևներով են պարզևատրվում ՀՀ ազգային և Արցախի հերոսները.

- ա) Մարտական Խաչ և Հայրենիք բ) Ոսկե Արծիվ և Մարտական Խաչ
գ) Հայրենիք և Ոսկե Արծիվ դ) Հայաստանի ազգային հերոս

3. Ազիմուտով շարժվել նշանակում է.

- ա) Որոշել շարժման ուղղությունը և այն պահպանել նախատեսված նշանակետին հասնելու համար:
- բ) Որոշել շարժման ուղղությունը և այն օգտագործել նախատեսված նշանակետը շրջանցելու համար:
- գ) Գտնել տեղանքում նախանշված կետը և հասնել այդ կետին:
- դ) Որոշել շարժման ուղղությունը և շարժվել դեպի նշանակետը

4.Նշվածներից, ո՞րը (ըստ քողարկման և դիտարկման պայմանի) տեղանքի տարատեսակ չէ.

- ա) Բաց բ) Կիսաբաց
գ) Փակ դ) Կիսափակ

5. Քանի՞ համագորային կանոնագրգեր ունի ՀՀ զինված ուժերը.

- ա) 1 բ) 3
գ) 2 դ) 4

6. Հայտնվելով հակառակորդի իշխանության տակ՝ զինված ուժերի կողմից հիվանդներն ու վիրավորները ձեռք են բերում՝

- ա) Պատանդի կարգավիճակ բ) Քաղաքացու կարգավիճակ
գ) Գերու կարգավիճակ դ) Ռեզինացիայի կարգավիճակ

7. Գիտակցության ժամանակավոր կորուստ կամ ուշագնացություն է համարվում գիտակցության կորուստը.

- ա) 2-4 րոպե բ) 5-6 րոպե
գ) 3-5 րոպե դ) 3-4 րոպե

8. Շարքի ճակատի հակադիր կողմը կոչվում է՝

- ա) Ետնակողմ բ) Թև
գ) Թիկունք դ) Ետնամաս

9. Կրակային պատրաստության չափանիշը՝

- ա) Հակառակորդին առաջին իսկ կրակոցով ոչնչացնելու ունակությունն է
բ) Հակառակորդին առաջին իսկ կրակոցով մասնակի ոչնչացնելու հմտությունն է
գ) Հակառակորդին առաջին իսկ կրակոցով ամբողջությամբ ոչնչացնելու կարողությունն է
դ) Հակառակորդին առաջին իսկ կրակոցով ամբողջությամբ ոչնչացնելն է

10. Քանի՞ համագորային կանոնադրություններ ունի ՀՀ զինված ուժերը

- ա) 4 բ) 3
գ) 2 դ) 1

11.Ի՞նչ է տեղագրական քարտեզը.

Տեղագրական քարտեզ կոչվում է Երկրագնդի մակերեսի, նրա վրա գտնվող բոլոր օբյեկտների փոքրացրած, ճշգրիտ, մանրամասն պատկերումը թղթի վրա:

12.Զինձառայողը պարտավոր է հասարակական վայրերում հարգանքով վերաբերվել քաղաքացիական բնակչությանը, ուշադիր լինել կանանց, ծերերի ու երեխաների նկատմամբ, փոխադրամիջոցներից օգտվելիս տեղը զիջել նրանց:

13.Դիտորդը պարտավոր է

- Ճիշտ ընտրել, սարքավորել և քողարկել դիտակետը, կողմնորոշվել տեղանքում, կարողանալ որոշել օբյեկտների հեռավորությունը, օգտվել դիտասարքերից ու կապի միջոցներից,
- Գիտենալ հակառակորդի մարտական տեխնիկայի և զենքի տեսակների հետախուզական հասկանիշները,
- Կարողանալ վերլուծել տեղեկությունները, կատարել գրանցում դիտամատյանում և հստակ զեկուցել հրամանատարին դիտարկման արդյունքների մասին:

14.Հյուսիսային կիսագնդում Արեգակի օգնությամբ հորիզոնի կողմերը որոշելու համար բավական է իմանալ, որ արևը ժամը 7⁰⁰-ին գտնվում է արևելքում, 13⁰⁰-ին՝ հարավում և 19⁰⁰-ին՝ արևմուտքում:

15.Ի՞նչ է կոման և ի՞նչ է պետք է անել դրա առկայության դեպքում:

Կոման ուղեղի կեղևի կտրուկ ընկճումն է, որը բնորոշվում է գիտակցության կորստով: Պետք է հիշել՝ եթե ուշաթափությունը տևում է 3-5 րոպեից ավելի և անոթազարկ կա, ապա դա կոմա է, և տուժածին պետք է անհապաղ շրջել փորի վրա կամ կողքային անվտանգ դիրքի և գլխին սառը դնել:

16. Ո՞րն է միջազգային մարդասիրական իրավունքի էությունը:

Միջազգային մարդասիրական իրավունքի էությունը այն, որ կանոնակարգում է զինված ընհարումները՝ նպատակ ունենալով թեթևացնել մարդկային տառապանքները, մեղմել պատերազմների պատճառած ցավալի հետևանքները:

17.Զինվորների և սերժանտական կազմի համար սահմանվել են հետևյալ կարգապահական տույժերը՝

- հայտարարել նկատողություն,
- հայտարարել խիստ նկատողություն,

- Ժամկետային ծառայության զինվորներին ու սերժանտներին զրկել զորամասի տարածքից հերթական արձակուրդից,
- զինվորներին նշանակել արտահերթ վերակարգում աշխատանքի,
- մեկուսացնել և պահել կարգապահական մեկուսարանում,
- զրկել գերագանցիկի կրծքանշանից
- իջեցնել սերժանտների պաշտոնը կամ մեկ աստիճանով՝ զինվորական կոչումը

18. Հրաձգության ժամանակ պահպանվում են անվտանգության հետևյալ կանոնները.

Պարապմունքից առաջ ղեկավարի հրամանով կամ ինքնուրույն ստուգել՝ լիցքավորված չէ՞, արդյոք զենքը:

Պահեստատուփը լիցքավորելիս ուշադիր հետևել՝ ուսումնական փամփուշտների մեջ չկա՞ն, արդյոք, մարտական փամփուշտներ:

Կտրականապես արգելվում է զենքը ուղղել մարդկանց վրա, անկախ այն բանից լիցքավորված է այն, թե՛ ոչ

19. Ո՞րն է կոչվում մագնիսական ազիմուտ:

Մագնիսական միջօրեականի հյուսիսային ուղղության և մինչև նշանակետն ընկած հորիզոնական անկյունը (ժամացույցի սլաքի պտտման ուղղության) կոչվում է մագնիսական ազիմուտ:

20. Հայստանի Առաջին Հանրապետության չորս զինվորական նախարարներն էին.

Հովհաննես Հախվերդյան
 Քրիստափոր Արարատյան
 Ռուբեն Տեր-Մինասյան
 Դրաստամատ Կանայան